## *5.8. Ստանդարտացում, չափագիտություն, սերտիֆիկացում*

Ըստ ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարության ամփոփ տեղեկատվության, 2003թ. հունվար-դեկտեմբերին ստանդարտացման, սերտիֆիկացման, հավատարմագրման և նորմատիվ փաստաթղթերի պարտադիր պահանջների պահպանման պետական վերահսկողության ոլորտներում իրականացված գործունեությունը բնութագրվել է հետևյալ ցուցանիշներով.

1. Ընդունվել և պետական գրանցում է ստացել Հայաստանի 165 ստանդարտ: ՀՀ տարածքում գործադրվել են 143 միջպետական, 9 միջազգային և 13 ՀՀ ստանդարտներ: Պետական գրանցում է ստացել արտադրանքի վերաբերյալ ՀՀ տեխնիկական 340 պայման: Թողարկվել են 9 անուն տեղեկատվական նյութեր՝ ստանդարտների համացանկ, տեղեկատու, տեղեկատվական թերթիկներ:

Տրվել է համապատասխանության 5384 սերտիֆիկատ, այդ թվում ներմուծվող արտադրանքի համար՝ 4359, արտահանվող արտադրանքի համար՝ 559, մնացած 466-ը՝ տրվել է ՀՀ-ում սերիական արտադրվող արտադրանքի համար: Մերժվել է արտադրանքի սերտիֆիկացման 19 հայտ, բոլորն էլ արտադրանքի անհամապատասխանության պատճառով:

2. ՀՀ տարածքում հավատարմագրվել է 6 լաբորատորիա:

**Ստանդարտացման, չափագիտության, սերտիֆիկացման գործունեության հիմնական ցուցանիշները**

| | 2003թ. հունվար- դեկտեմբեր | | | |
|---|---|---|---|---|
| | ընդա-մենը | աճը կամ նվազումը 2000թ. հունվար-դեկտեմբերի համեմատ (նվազումը «-» նշանով), % | աճը կամ նվազումը 2001թ. հունվար-դեկտեմբերի համեմատ (նվազումը «-» նշանով), % | աճը կամ նվազումը 2002թ. հունվար-դեկտեմբերի համեմատ (նվազումը «-» նշանով), % |
| Ընդունված և պետական գրանցում ստացած ստանդարտների քանակը | 165 | - 14.5 | - 20.3 | 54.2 |
| Պետական գրանցում ստացած տեխնիկական պայմանների քանակը | 340 | - 26.1 | - 4.0 | 9.3 |
| Թողարկված տեղեկատվական նյութերի քանակը | 9 | - 52.6 | - 50.0 | - 18.2 |
| Տրված համապատասխանության սերտիֆիկատների քանակը | 5384 | - 30.4 | - 0.6 | 3.4 |
| այդ թվում | | | | |
| ներմուծվող արտադրանքի համար | 4359 | - 35.7 | 7.3 | 6.7 |
| արտահանվող արտադրանքի համար | 559 | - 0.4 | 7.9 | 64.9 |
| Արտադրանքի սերտիֆիկացման մերժված հայտերի քանակը | 19 | - 72.9 | - 53.7 | - 36.7 |

2003թ. հունվար-դեկտեմբերին անորակության պատճառով չեն սերտիֆիկացվել ներմուծվող արտադրանքի մի շարք տեսակներ:

**2003թ. հունվար-դեկտեմբերին անորակության պատճառով չսերտիֆիկացված արտադրանքի ցուցակը**

| Երկիրը, արտադրող ձեռնարկությունը | Արտադրանքի անվանումը | Արտադրանքի մոդելը, տիպը | Քանակը |
|---|---|---|---|
| Ռուսաստանի Դաշնություն «Ալեքսեևի կաքնապահածոյացման կոմբինատ» | Խտացրած կաթ, մետաղական տուփերով | - | 180 կգ |

| Երկիրը, արտադրող ձեռնարկությունը | Արտադրանքի անվանումը | Արտադրանքի մոդելը, տիպը | Քանակը |
|---|---|---|---|
| Ա.Մ.Ն. «Becton Dikinson» | Միանգամյա օգտագործման ներարկիչներ | - | 1 կգ |
| Ավստրիա «Semerit» Իտալիա «Michelin» | Մարդատար ավտոմեքենայի դողեր օդաճնշական | - | 8 հատ |
| Հայաստանի հանրապետություն «ԳԱՄՄԱ» ՍՊԸ | Ձեմեր՝ ծիրանի, թզի, մոշի | «Արեգա» 1/ 524գ | - |
| - | Մարդատար ավտոմեքենայի դողեր | - | 110 հատ |